Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 21-ի N 1184-Ա որոշման

Համահայկական խաղերի մարզական ավանի

ստեղծման ներդրումային ծրագիր

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության կոմից իրականացվող տասներեքամյա ներդրումային ծրագիր

1. Ընդհանուր տեղեկություններ ծրագիրն իրականացնող կազմակերպության վերաբերյալ

1.1 «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե»

1.2 Հասարակական կազմակերպություն

1.3 Կազմակերպությունը ստեղծվել է 2001 թվականի մայիսի 11-ին

1.4 Գրանցման համար՝ 211.171.00145

1.5 Հասցե՝ Բայրոնի փողոց, Շ5, կենտրոն 0009 Երևան

1.6 ՀՎՀՀ 02559841

2. «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության գործունեության առարկան և նպատակը համահայկական խաղերի, ինչպես նաև այլ մարզական միջոցառումների կազմակերպումն է, որոնք պետք է խթանեն համահայկական մարզական շարժումը:

3. Ներդրումային ծրագրի նպատակն է ստեղծել Համահայկական խաղերի անցկացման, իսկ խաղերից դուրս՝ երիտասարդական տարբեր հավաքների, Հայաստան-Սփյուռք բազմաբովանդակ միջոցառումների, հանգստի և ժամանցի կազմակերպման բազմաֆունկցիոնալ մարզական ավան:

4. Ներդրումային ծրագիրը իրականացվելու է «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից՝ տարբեր գործընկեր կազմակերպությունների և անհատների միջոցով:

5. Ծրագրի ոլորտներն են՝ սպորտ, տուրիզմ, առողջ ապրելակերպ, ժամանց:

6. Ծրագրի բյուջեն կազմում է շուրջ 20,900,000,000 (քսան միլիարդ իննը հարյուր միլիոն) ՀՀ դրամ

7. Ծրագիրը իրականացվելու է 3 փուլերով

7.1 Առաջին փուլ՝ 13,300,000,000 (տասներեք միլիարդ երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ Նախատեսվում է իրականացնել.

- հողային աշխատանքներ

- կոմունալ ենթակառուցվածքների իրականացում

- ճանապարհների կառուցում

- 600 տնակների կառուցում և տեղադրում

- ճաշարան և բժշկական կենտրոնի կառուցում և կահավորում

- բարեկարգում, կանաչապատում և ցանկապատում

<u>Իրականացման ժամկետը՝ մինչև 2031թ. դեկտեմբերի 31-ը</u>:

7.2 Երկրորդ փուլ՝ 5,700,000,000 (հինգ միլիարդ յոթ հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է կառուցել սպորտային կառույցներ(լողավազան,

սպորտդահլիճներ, թենիսի կորտեր և այլն) և ապահովել համապատասխան մարզագույքով։

<u>Իրականացման ժամկետ՝ մինչև 2035թ. դեկտեմբերի 31-ը։</u>

7.3 Երրորդ փուլ՝ 1,900,000,000 (մեկ միլիարդ ինը հարյուր միլիոն) ՀՀ դրամ, նախատեսվում է կառուցել լեռնադահուկային ուղիներ, բուգել ճոպանուղի, ներդնել արհեստական ձյան համակարգ։

<u>Իրականացման ժամկետ՝ մինչև 2038թ. դեկտեմբերի 31-ը։</u>

8. Ներդրումային ծրագիրը ֆինանսավորվելու է «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության գործկոմի անդամների, բարեգործ ֆիզիկական և իրավաբանական անձանց, տեղական և արտասահմանյան այլ աղբյուրների կողմից։

9. Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ մինչև 6000 անձ ընդունելու հնարավորություններով, սպորտային կառույցներով և մարզագույքով հագեցված ժամանակակից մարզական ավան, որտեղ կանցկացվեն Համահայկական ամառային և ձմեռային խաղերը՝ ապահովելով մասնակիցներին գիշերակացով և սննդով, իսկ խաղերից դուրս՝ երիտասարդական տարբեր հավաքների, Հայաստան-Սփյուռք բազմաբովանդակ միջոցառումների, հանգստի և ժամանցի կազմակերպման բազմաֆունկցիոնալ կենտրոն։

Ծրագրի ամբողջական իրականացման արդյունքում մարզական ավանի լրիվ ծանրաբեռնվածության պայմաններում կապահովվի շուրջ 1240 աշխատատեղ։

Համահայկական Խաղերի
Համաշխարհային Կոմիտեի
նախագահ **ԻՇԽԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ